

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՆԱԿԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԸՅՁԱՅԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄԻՆՈՍԿԵՆԱՆՈՒՄԵՆԻ ԳՐԵՐԸ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՆՈՒՄԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄՈՒԱԿ "ՇԱՄԱԸՅՔԱՎԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐԱՆ" ԿՈՅՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄ ԵՒՐ, ՈՐ ԾԳՏՎՈՒՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿՈՒՄ ԵՒՐ ԶՈՒՆԻ ԸԼՁԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ freebooks@rambler.ru

**ՂՈՒԿԱՍ
ՍԻՐՈՒՆՅԱՆ**



**ԻՐԻԿՈՒՆ ԲԱՐԻ
ԴԱՐՁԻՐ ԱՌԱՎՈՏ**



**«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1977**

Ղուկաս Սիրունյանը ծնվել է Աշտարակի շրջանի Ուջան գյուղում: 1971 թ. ավարտել է Երևանի պետ. համալսարանի բանասիրության ֆակուլտետը: Գրել սկսել է պատանեկան տարիներից: Տպագրվել է «Գարուն» ամսագրում, երիտասարդական ամսանախում և պարբերական մամուլում:

«ԻՐԻԿՈՒՆ ԲԱՐԻ, ԴԱՐՁԻՐ ԱՌԱՎՈՏ» ժողովածուն բանաստեղծի անդրանիկ հանդիպումն է ընթերցողի հետ: Այստեղ ամփոփված են խոհական և քնաբական բանաստեղծություններ, որոնց առանցքը կազմում են՝ այսօրվա երիտասարդ մարդու հոգեկան աշխարհը, նրա հույզերն ու ոգորումները:

Ա $\frac{70304 (172)}{705 (01) 77}$ 96—77 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն
Երևան 1977

●

Առու, տար ինձ քո հունով,
ջրշուշանների միջով,
ուր համրանում են քո աղմուկները,
ուր խունանում է քո մեջ երկրի արտափայլը,
ուր աստղաշողը լույսի շեղբերից
փափուկ ու փխրուն տնակներ է շինում,
ուր ապրոսմ ենք մենք մեր երազներում
աշխարհի հմայիչ ուրվապատկերների մեջ:
Առու, տար ինձ քո հունով արմատների խորքը,
ուր ծնվում են ծաղիկների բույրը և երանգները:
Լուծիր ինձ երկրի գաղտնիքներին,
որոնց նայել եմ արցունքներիս միջից,
իմ հեռվից,
իմ մոտիկից,
իմ հազարամյա կյանքում:
Սովորեցրու ինձ անկանգառ երգել
և ննջել խոր երազներով:
Տար ինձ լեռներից այն կողմ,
գաղտնիքներից այն կողմ
երևակայությունից այն կողմ:

ՄԵԶԱՆԻՑ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ

Արեգակի լույսը կիջնի մեր խավար թիկնոցների վրա,
մենք կրկին կտեսնենք իրար և մեր շրջակա աշխարհը,
ու հիացքից կծնվի մեր կյանքի հերթական զարմանքը:
Նորածին պարզ առավոտը, մեր հրճվանքի երգերը
և բոլոր նրանք, որ լուսավորվել են,
կտեղավորվեն մեզանից ինչ-որ մեկի հույզերի մեջ,
ու նրա ժամանակը կզարդարվի տոնական խոհերով:

Երբ մեզանից ինչ-որ մեկի ժամանակը զարդարվի
տոնական խոհերով,
արեգակի լույսն արդեն կթափանցի նրա գոյության խորքը:
Ղրսում, երգի տողերից հեռու, կմնա աշխարհը՝
խոտերը, որ ծաղկում են գարնանը, աշնանը՝ թոշնում,
ջրերը, որ հոսում են վերից-վար,
և քամիները՝ հավիտենական ու հպանցիկ:
Մեզանից ինչ-որ մեկը այլևս չի զարմանա,
երբ վառարանը հանգչի իր մութ սենյակում
և շորացող ծաղիկների մեջ մեռնեն գույները:
Որովհետև նա աշխարհի համար կսահմանի
մի նոր առավոտ, մի նոր կեսօր, մի նոր իրիկուն,
կտեսնի նրանց նախածննդյան կերպարանքները,

որ խանձարուրի մեջ օրորվում են հավիտենությունից այն
կողմ,
և նա անվրդով կշրի ծաղիկները:

Սեղանից ինչ-որ մեկը կասի, որ դետաքարերը փափուկ
վարսեր ունեն,
քամին կպոկի վարսերը, եթե մենք շշույենք նրանց:
Նա կասի, որ մի սաղարթախիտ ծառ և մի շոգ օր
որոնել են մեզ անձրևոտ դաշտերի մեջ
և կասի՝ արդյոք արժե՞ գտնել նրանց, թե՞ ոչ:
Մեղանից ինչ-որ մեկը անդառնալիորեն կկորցնի զարմանքը,
և մեզ հոգսի դիմաց կբաժանի երգեր:



Երեկո: Ես զգում եմ ծաղիկներիդ բույրը:
Սի շքնաղ իրան լուռ ծերանում է քո անհայտության մեջ:
Ես ոչինչ չեմ տեսնում:
Կույսը մնաց եկող դարնան ոստերի մեջ:
Հիմա կույր եմ ես, դու այդպես ես ուզում
և վերադարձը այլևս անցած օր է
խավարի տարիքում ընկղմված:
Երեկո: Քո կտավի վրա ջնջվում է օրվա կերտած
դիմանկարը,
կորչում են հեռաստանները կարուտի մեջ

և մանրահատ քայլքով իջնում է հիշողությունը
լքված վայրերն ի վար:
Օ՛, իմ բարի փոքրիկ, հիշիր արևոտ օրվա մեջ
եղած բոլոր անունները,
ընդմիշտ մի սիրտ կա քո շուրջը,
որ ունի քո սրտի տեճերը,
դուր անցյալը, պահիր վերադարձը,
ընդմիշտ մի լույս կա քո շուրջը,
անհայտության մեջ, քո իրանի վրա՝
լուռ ծերացող:

ԼԵԳԵՆԴ

Առավոտ երեկո մի ծղրիդ էր երգում-
մի ուրիշ ծղրիդ ձայնակցում էր նրան
հավիտյան, ընդմիշտ:
Երբեմն նրանցից մեկը թռչում էր հեռու երկրներ,
մյուսն հավատում էր՝ դեռ երգում է ընկերը:
Նրանք երբեք իրար չէին կորցնում,
որովհետև աշխարհն անդառնալիորեն
սուզել էին իրենց բերկրանքի ծովում:

Նրջանկության համար
բախիր դուռը, և թող վերջապես
ճանապարհներից մեկը ավարտվի տան մեջ:

Նրջանկության համար
ջրի ծաղիկները, և թող նրանք
խմեն քո ջահելության կենացը:

Նրջանկության համար
պառարանը վառիր դողդոջ մատներով,
և ձյան տակավին մեղմ սառնության մեջ
որոնիր ինչ-որ պատասխաններ:

Ոչունը կգա ծաղկած խոտերի միջից
ջիւմ օրերի և ակնկալիքների փափուկ ճամփաներով:
Մեր համբույրը
մի պահ կլինի դառնահամ:
Մենք կփորձենք մի պահ հիշել նրանց,
ովքեր պիտին մեր հասցեն

և անհամբեր կսպասենք մի պարզ հրավերի:
Երբ աշունը գա,
կծնվեն նոր-նոր քաղաքներ
մեր հուսահատ մեկնումների համար:



Ես ցանկացա,
որ քո և իմ վայրկյանները
հավերժանային վերջալույսի մեջ
իբրև հանգստավետ հովիտներ:
Իմ աչքերում հիմա անցածի մեղրահամը
լուծում է տարիքս, խինդս և վիշտս:
Սեփական պատմությունս տարածվում է շուրջս
հատված—հատված
և ամեն վայրկյան հեռանում ինձանից:

Քնքշանքների ու գեղեցիկ խոհերի երկրից
հեռու,
այստեղ,
ծաղկում են ցավի քնքուշ ու գեղեցիկ
ծաղիկները:
Ես անցնում եմ վերջալույսի երկրով
և վերջալույսի անձանոթ մի քաղաքում
ահա կարծես գտնում եմ տունս:

Երկինքը մեղեդիներ հղեց
և ճերմակ թևիկներ հուլսի երփներանգ
շողիկներով բոլորուն:
Երկիրը գաղտնիքներ տվեց
և ճանապարհ հավիտենության՝
երգով անցնելու համար:
Իսկ կյանքը, որն ինքը եկավ,
րերեց զարմանքը
և հոգնության միջանկյալ պահեր՝
ուրախության, սիրո և թախծի համար:

ԽՈՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ

—Սեր իմ, սեր, ես լսում եմ հաճախ,
զմայլանքից հետո մարդիկ հարցնում են՝
իսկ ո՞րն է գեղեցիկը և ո՞րն է բարին:

—Եթե հարցնում են,
ուրեմն կորել է գտնելու ժամանակը
և տխրությունը տրվում է հոգիներին
որպես միակ վերջաբան:

—Սեր իմ, սեր, դու ինձ տանում ես քեզանից հեռու
և համոզվում ես, որ այդ ես եմ:

— Իւրեւն մեզ լքել է հավերժությունը,
 որ ապրում էր մեր փոքրիկ տան մեջ:
 — Օ՛, տոնական օրերին ինչո՞ւ անհետացավ
 վիշտը, ինչո՞ւ խունացավ վշտի ժամանակը
 և հիմա մեր տխուր և ուրախ պահերը
 ծածկվում են գուլնդգուլն վարդերով,
 որոնց մենք սիրում ենք անհունորեն շատ:
 — Հիմա մենք գտնում ենք իշար ինչպես սլատահի,
որտեղ սլատահի,
 մեր փոքրիկ տունը լուծվել է մայրամուտի շողերին:
 — Նրա տեղում մնացել է հուզիչ նատյուրմորտ
 կարտտի և սիրո:
 — Հիմա պարզված ձեռքեր եմ տեսնում:
 — Փնտրիր նրանց մեջ բարևի աջը,
 ու պետք է շուռ տալ վարդերը,
 անցնել տոնական պահերը այն կողմ,
 ամենավերջում նաև որպես սկիզբ
 ունենալու համար որոնման ժամանակը:

ԲԱԼԼԱԴ

Ես տեսնում եմ առաջին ծաղիկները,
 որ բարձրանում են տաք առավոտի մեջ:
 Օրը ափեափ լցվում է ծաղկաթերթերով:
 Հին գիշերը մնում է ետ:

Մեռնում է հիշողությունը: Օրվա փողփող
պաստառների վրա օծվում է լույսը:
Գուլյների մեջ անաղմուկ
արթնանում են ձայները:
Մեռնում է հիշողությունը: Վայրկյանը հիմա
բացվում է իբրև անմահության ծաղիկ,
վայրկյանը ճերմակ օդապարիկներ է կապում
հին իրերի փխրուն կողերից:
Առաջին ծաղիկներ, օ՛, արդեն հին ծանոթներ,
Ծիւի պես շարժվում է տաք առավոտը,
հրում եք առաջ մարդու ոսկորներն ու սիրտը
ճանապարհների վրա: Ճանապարհների վրա
պայթում են ճերմակ օդապարիկները:
Կանաչ հովտից հետո սկսվում է սարահարթը:
Բույրերն ու երանգները լցվում են դատարկված սիրտը:
Հնչում են սարահարթի աննման երգերը:
Ամենավերջում գալիս է արշունը:
Եվ ծնվում է նոր հիշողությունը:



Ես գիտեմ,
քո սերը հասնում է ծիրանենու ճյուղերին
խաղաղ առավոտի մեջ,
հին ցանկապատով այգում,

Հնաոճ տան դիմաց:
Քո ծիրանի ծառին երգեր են հասնում
անմահության շշուկների պես աներևույթ,
և դու բռնում ես երգերի նուրբ թևերից
քո փխրուն ափերով:
Դու երգեր գրելուց առաջ
հանդերից հող պիտի առնես,
առվից ջուր պիտի առնես,
հույզերիդ մեջ:
Ապա իջնես ծիրանի ծառից,
իջնես արմատներն ի վար...
Ու մի հողոտ մանուկ, որ լալիս է դրսում,
առնես քեզ հետ,
մի սարվոր մարդու աշնան օրվա մեջ
թրջված հոտի հետ առնես քեզ հետ,
մի լուսաբաց՝ գյուղի զարթնող աշխույժով,
մի իրիկուն՝ հոգնած շշուկներով
առնես ուսերիդ որպես պատմուճան
ցուրտ ճանապարհ դ անցնելու համար:
Երգեր գրելուց հետո,
երբ նրանք էլ շեն լինի,
գիտեմ, դու կելնես նրանց ընդառաջ...

●

Սպասիր լեռան կատարին,
ձյան հեքիաթների մեջ ապրիր ջերմ օրեր
և փակիր նրանց քո փոքրիկ ասիերով:
Սպասիր լեռան ստորոտում,
խոտերի սավերներում թաքցրու քո
հուսահատությունը: Ինքնամոռացման մեջ սակայն հիշիր,
թե երբ է բացվում օրը:
Եվ լուսաբացի հետ ամեն անգամ
ցանկացիր լինել երազներիդ մոտ:
Իսկ երեկոյան շշափես արցունքներիդ,
որովհետև շես տեսնի լուսաստղը
և շես զգա երկրի սերը:

●

Հավիտյան
բուրում են վարդերը,
ջրերը հոսում են անկանգ:
Ծովափի ավազին գրվում է և ջնջվում
բոլոր անցած օրերի մասին:
Իսկ հեռավոր մի տեղ
նոր-նոր բացվել է առավոտը,

և սկսվում է ինչ-որ մի կյանքի հետ
գրվել և աշխարհի կենսագրությունը:
Ես խորհում եմ քո մասին և շեմ զգում բնավ,
որ ավարտվում է օրը
և վերջալույսը կնվիրի մեզ շուտով
մեր կյանքի հին-հին նկարները, անվերջանալի
հուշագրություններ և ոսկե հավաքածո
հին-հին մակագրություններով:

●

Հին երգերից մնում են ինչ-որ հուշ-ելեջներ
և մնում են մարմրող երանգներ անցյալ գարնան ծաղիկներից:
Նոր առօրյան նախ ծնում է զարմանքը՝ իբրև սկիզբ:
Առավոտից երեկոյի կարճ հտավին
պետք է հասցնել ուրվագծել նորահայտ աշխարհը
և նոտագրել նորածին աղմուկը:
Երեկոյի վերջում միայն լուծվում է զարմանքը,
և ծնվում են նախասկզբնական սարսափն ու հիացումը,
իսկ կյանքը շարունակվում է ակնկալիքների բուրավետ
հովտում:

Եվ բոլորովին մոռացված ելեջներից ու թույլ երանգներից
հյուսվում են անմատույց առեղծվածներ՝
մեծ, փայլուն, մռայլ,
որ մնում են մեր ետևում, պատվում են մեր շուրջը
և թռչում մեզանից առաջ:

●

Հուցկու բոցը թրթռում է,
բավական է՝ գիշերվա փոսում մի փոքրիկ թիթեռ
հոգեդարձ ապրի

Հուցկու բոցը թրթռում է,
բավական է՝ աչքերիդ սառ աստղափայլը շքանա,
և ես տեսնեմ երկրի լույսը:

●

Ինձ՝ այնպիսի ծաղկաման,
ուր ծաղիկները ծնվեն ինչպես հողում:
Քեզ՝ այնպիսի զարդեր,
որ կարողանաս նաև թաքցնել քո մեջ,
ինչպես ծաղիկները հողում:
Մեզ՝ մոռացում ժամանակի
և հոգնությունը հաշվել սրտի զարկերով:

ՅՈՒՐՏ ԳԻՇԵՐ

Եթե վառես կրակը, գիշերը կայրվի
մատներիդ արանքում, և մրաջուրը
կալյակներով կհոսի պատուհաններից վար:
Գուշակոսմների դժգույն մատյանները
կվառվեն կամաց և մոխրի միջից
մի ճերմակ ծաղիկ քեզ կնվիրի
հարսանեկան վառ շորեր:
Մի ագռավ կփախչի լույսից
իր նախապապերի երկրում,
նախատատերի գողտրիկ հուշերի մեջ
նախշուն փետուրները գտնելու:

ՎԵՐՋԸ

Երեկոյան խոնարհվում են աչքերը
տետրի ճերմակ թերթերի վրա:
Կենդանությունը հասնում է մարմրող հուշերից,
ուր առվի ափերին բուրում էին
երիցուկի դալար ընձյուղները,
արեգակը մեղմ այրվում էր կաժանների վրա
ու պիտի լավեր մի ծանոթ ոտնաձայն:

Տաք անձրև է գալիս,
որ այրում է իրերի մաշկը
և իրերը արտասովում են:

Ինչ-որ ելևէջներ, ինչ-որ գույներ,
որոնք հազիվ հիշելի են, օտարված սեփական իրերից,
պատասպարվում են տետրի ճերմակ թերթերի մեջ:
Մի ծանոթ ձեռք այրող ու խոնավ մատներով
թակում է դուռը, պատը, սիրտը:

Անձրևի շիթերը ցայտում են
տետրի ճերմակ թերթերի վրա
և թրջում աշխարհի վերջին շոր պատառը:



Ընդ ապրած վայրկյանների մեջ թող մնան անմատույց
խոռոչներ:

Իսպառ թող չվերջանա ծաղկաբույրը,
և ամբողջ ջերմությունն ու տաք կաթիլները
չցողենք մեր սառած մարմիններին:
Մեր ապրած վայրկյանների մեջ արևն ու ձյունը
թող միմյանցից հեռու չլինեն ամիսներով՝
լեռներ ու ծովեր այն կողմ—
թող լինեն իրար կողքի, իրար մեջ, ինչպես որ դաշն են
ապրում

խաբկանքն ու հույսը:
Այդպես ընդմիջտ կլինի
անձրևի մեջ արև,
արևի մեջ՝ անձրև,
անեկդոտում՝ առասպել,
առասպելում՝ անեկդոտ,
քո հուշերում կլինեմ ես,
իմ գալիքում կլինես դու:
Հնարավոր է, որ ապրենք կրկին մեր ապրած վայրկյանների
մեջ:

Ճանապարհն արդեն կանցնի ջահելության հետքերով,
կհասնի մինչև ճնճղախոտին փայլփլող ցողի պայծառ
ծովափը:—

Թող մեր երևակայության սահմաններում ամենուր
ունենանք մեր սիրո և տենչերի ակունքները:



Արևը մնաց ծառերի մեջ
կիսատ ընթերցած գրքի թերթերին
լռության մեջ...
Անծանոթ իրերը
և անծանոթ մարդիկ սիրալիր ու բարի աչքերով
մեզ տարան իրենց խինդերի միջով:
Ու շգիտես ինչու կյանքը շարունակվեց արդեն

Հապճեպ առօրյայի
և մեր արվեստի էսքիզների մեջ:
Երեկոները երկրի տարբեր ճանապարհներով
վերադառնում ենք միշտ մեր սիրելի վայրերը
և երգերով ու բարի տենչերով
մինչև առավոտ թափառում ենք
մեր երբեմնի մեծ, անմատույց լեզենդների շուրջ:

●

Յուրաքանչյուր վայրկյանը
կլցնենք հազարամյակով, և մեզ հետ կլինի
ուրախությունը՝
իբրև տուն, փողոց, երկինք:
Մեր կյանքի ուրվանկարներից
ընդմիջտ կբարձրանան ծանոթ ջրահարսեր,
կիսշշան ծանոթ եղեգնուտներ:
Յուրաքանչյուր վայրկյանի գաղտնիքը
մեկնումեկը մեզանից կիմանա անշուշտ
և ամեն անգամ իբրև նոր ուրախություն
կհայտնվենք իրար
երազում, ճանապարհին,
ամենուր:

Սրանք միացնում են տառապանքն ու ցնծությունը
Եվ ստանում են սովորական կյանք:

Ապա ստանում են լույսը,
նաև ստվերը

և միշտ ձգտում են երջանկության:

Գարնան երփնագույն խոտերի տեղում հիմա
մեր խոհերն են կանգնած իբրև արձանիկներ:

Ոչ ոք չգիտեր,

որ գարնան ճանապարհներն ավարտվում են անսպասելի
ցանկալի խոսակցության ամենաթեժ պահին անզամ:

Եվ սկսվում է մի նոր աշխարհ, ուր ավելորդ են

հրաժեշտի խոսքերը և փոխադարձ մխիթարանքը:

Ես քեզ շեմ որոնում այլևս: Դու հեռացար իմ տան

ճանապարհով

և բաժանումը կիսեց մեր կյանքը հավասար մասերի՝
տառապանքի և ցնծության:

Ես ինձ էլ շեմ որոնում: Հեռացա քո տան ճանապարհով

և քո տունը արևի հետ մայր էր մտնում և արևի հետ երևում՝
ինձանից հավիտյան հեռու:

Մենք որոնում ենք մեր թողած բախտակիր խեցիները

և սիրով, տենչանքով, հավատով, տխրությամբ

սպասում ենք միշտ գարնան ձայներին:

ՕՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ

Ես բացել եմ աչքերս, դիտում եմ շուրջս:
Սովորական օր է: Կանաչ հովտում խելահեղորեն
վարգում են ձիերը:
Արևը վառվում է: Թվում է ջերմությունից խոտերը,
քարերը, ձիերը
Կաճեն, կաճեն, կմեծանան մեկը մյուսին ծածկելով,—
Կաճեն հավերժորեն, ու կկորչի նրանց մեջ աշխարհի
վերջին օրը:

Մինչդեռ ես կույր եմ,
որովհետև տեսնում եմ կանաչ հովտի սահմանները,
որոնք լուծվում են անապատի տատասկներին:
Ես խուլ եմ, որովհետև լսում եմ պաղ քամու ձայնը
մութ ժայռերից ելնող:

Ես համր եմ նաև, որովհետև
գրուցում եմ աշնան ստվերների հետ,
որոնք կորցնում են իրերի գեղեցիկ տեսքը,
թաղում իրենց սրտում հեռուների հմայիչ կանչերը:

Ուզում եմ հավատալ միայն իսկական երգին:
Իսկական երգի մայրը սովորական օրն է,
Որտեղ պարզամիտ շարժումների մեջ նոր-նոր ծնվում են
տառապագին խոհերի մանուկները:

Կանաչ հովտում կորցրու քո գրիչը,
քո թուղթը խառնիր թռչող կռունկների երամին:
Սովորական օրվա մեջ քեզ համար նույնպես սահմանված
է տեղ:
Սովորական օրվա մեջ ապրում է հավերժությունը:



Անձրևոտ պատկերներից այն կողմ
իմ ճանաչած խաբկանքի ու սիրո սահմաններում
արձանների պես այլևս անփոփոխ
մնում են մեր կերտած կենսագրությունները:
Ես երիտասարդ եմ արդեն: Նշանակում է
անձրևափոսը, որ ամենամեծ ծովն էր,
և քաղաքը, որ ամենամեծ քաղաքն էր,
և պատմվածքը, որ ամենասրտաշարժն էր
և հավատն այս ամենի՝
պիտի նվիրեմ մանուկ մարդկանց:
Իսկ այստեղ, այս բոլորովին նոր աշխարհում
սիրով ընդունելու եմ այս աշխարհի հրաշքները
և պարզելու եմ իմ հիացումը:

ԲԱՐԻ ԵՐԵԿՈՒ, ԵՐԳ

Նա ցույց տվեց լեռը մեղմ ձյուների մեջ,
և ես հասկացա, թե ինչպես են ելնում կանաչները
գարնան օրերին:

Նա փակեց աչքերս հույզերի շոյանքով
և ես հավիտյանս կանգնեցի հեռավոր աստղերի
կրակների դեմ:

Նա լցրեց փողոցները մարդկանցով
որոնք նույն պահին և ուրախ էին, և տխուր
և ես այդ երեկո լրջորեն
խոսեցի ինքս ինձ հետ:
Նա կանչեց բոլոր նրանց, որոնք շարժվում են,
կանչեց բոլոր նրանց, որոնք չկան
և նրանց անունների շուրջ տարածեց լույս:

Նա հեռացավ ինձնից, քեզնից,
նա ծածկեց մեզ բարի երազներով, որ շմբեսենք ցուրտ
սենյակներում,
և իբրև հրաժեշտի խոսք, ասաց՝
ամեն ինչ լավ է աշխարհում:

Երբեմն կշնչեն քո հին կտավները ջերմորեն ու սիրով
և երբեմն կշարունակվի ձեր անավարտ առօրյան:—
Նրանց հետ կապրես օրերը մանրամասնորեն,
ինչպես սովորաբար լինում է:
Միասին կմեկնեք հեռու քաղաքներ,
ուր կուզենայիք լինել,
կգնաք հաճելի զբոսանքների,
իսկ ավելի շատ կփնտրեք ծիծաղի առիթներ:
Բայց ահա ինչպես ամեն անգամ,
ձյունահոդմերի մեջ և գարնան կայտառ ոստերի մեջ
կրկին կկորցնեք միմյանց:
Տունդարձի ճամփան դու կորոնես արդեն
ուրախ և թախծոտ երգերի մեջ,
ուր հուշի մոմե արձանիկները
այրվում են շուրջդ ինքնամփոփ,
քեզ համար այլևս անհասկանալի:

Իսկ կլինեմ քեզանից հեռու
և այլևս չեմ իմանա ինչպես է ստավոտը բացվում:
Դու կլինես ինձանից հեռու

և քո անօրյա թեթև կորուստները
չչափես երբեք տղամարդու հետ:
Մենք կլինենք իրարից հեռու,
և կյանքը մեզ համար
կսկսվի նորից զարմանքից:



Ձյան փաթիլների մեջ շարունակվում է ամառը
և մեր հին ոտնահետքերը թարմ են:
Մենք անցել ենք ու գնում ենք:
Իրականությունը մեր համբույրներն են
ու մեր կանչերը,
որոնց անգթաբար ներկում են գիշերն ու ցերեկը:
Ծառի ճյուղերին նաև
երգեր են հասնում,
և հրաշք թիկնոցներ են կախվում երկնքից,
որ կրելիս մերկացնում են հոգին ու գեղեցկությունը:
Անհնարինը մեր հիշողությունն է,
որ կանգնում է մեր միջև բաժանման քարի պես
և երբեմն չքանում է՝ մեզ թողնելով
փակ, հմայիչ դռների առջև:

ԹՈՒՅՆ ԵՎ ՄԵՂՐ

Երբ ես կգովեմ ինչ-որ մեկի
և հույզերից կհալվի իմ հոգին,
դու, մեղու, քաղիք խոսքերիս նեկտարը:
Երբ ես կմնամ մենակ
խավարի պատերի ետևում
և ինձ կլքի հույսը,
դու, մեղու, քաղիք կսկիծներիս նեկտարը
ու դեռ մնա ինձ հետ:
Երբ ես կստանամ իմ բաժին հուշերը
և առավոտ, կեսօր, երեկո
ինձ կճաշակի կարոտը,
դու, մեղու, քաղիք սրտիս մեղմության նեկտարը
և թռիք գնա:
Թռիք, իբրև թե այդ ես եմ թռչում,
տար մեղրը քաղցր,
իբրև թե ես եմ տանում այդ բեռը,
թռիք խաղաղ ամռան ստվերների միջով,
իբրև թե ես եմ գնում,
գնում եմ տուն:

Եկ, իմ ծաղկած շիվ,
քո կանաչ լույսով ողողիր
գիշերապահի տարակույսները:
Աստժո որդին ես դու,
և քո ննջարանը ամենանուրբ հույզերի գիրկն է:
Եկ իմ ծաղկած շիվ:
Այստեղ, քեզանից, օ, այնքան հեռու
ձյունահողմի տնակներն են,
ձյունահողմի աստղերը
և հավիտենական նիրհը վազորդի հոգում:
Այստեղ, քեզանից, օ, այնքան հեռու,
թերի է լեզենդը, որով մենք ապրում ենք:
Դու իմ հարկի տակ
կթողնես քո թևերը
քո ոգին և հմայքը:
Եվ երբ կարթնանա մեր սրտում հավատը լեզենդի,
դու մեկնիր քո ճանապարհով,
իմ ծաղկած շիվ:

Երեկոն՝ մի հոգնած ճամփորդ,
օրորվելով նստում է մեր բակում:
Մի մանուկ՝ մի հոգնած ճամփորդ,
դեռ խաղում է դրսում ու չի գնում տուն:
Մայրս՝ մի հոգնած ճամփորդ,
գալիս է հավերժության պես,
նստում է մեր բակում:
Հայրս ուշանում է դաշտից, Մեկը ձայն է տալիս
Խոսակցությունները՝ ինչպես երազում,
և աստղալույսը պաղ
և սպասումները ջերմ
հոգնած ննջում են մեր բակում:

ՊԱՊՍ

Արթնացավ շատ վաղ, դեռ աստղեր կային,
պատուհանից նայեց դուրս, դժգոհեց, որ ձյուն է եկել.
«Տարին վատ կլինի» — ու տան անկյուններում փնտրեց
իր առտնին իրերը:
Երբ դուրս էր գալիս, նայեց մեզ.
մենք քնած էինք — մեր դեմքերին նստել էին
աղավնու նման փափուկ ժպիտներ:

Ծրբ դրսում էր, համբուրեց մեզ բոլորիս,
նաև ուրախ խոսքեր ասաց
ու հազարամյակի պես դանդաղ
իջավ մեր հին տան աստիճաններով:
Իսկ մենք ձմռան երկար քնի մեջ ճաշակում էինք
երկնքից ընկած քաղցր խնձորները:

ՈՒՇ ԱՇՈՒՆ

Յրտի թևերը թրթռում են պարուլը-սլարուլը
ու մեկնվում են գրկելու արեգակի պսակը:

Թիթեռներն հիմա գույներ են փնտրում
երկրի պաղ երակների մեջ:
Ժաղիկները գույն:իր են փնտրում,
որ կոչվեն ծաղիկներ ու մնան անմահ
և մեղուներին առած իրենց սլաղ առէջքներում
խարխափում են երկրի ստվերների մեջ:

Յրտի թևերը
հուսահատ ընկնում են ծաղկաթերթերին,
իսկ արեգակը լողում է հեռու:

●

Հովվին տարավ լուսաբացը,—
երգում էր հովիվը:
Ծակեց մի սուր փուշ հովվի սիրտը,—
երգում էր հովիվը:
Մի անանուն ծաղիկ
հովվին փակեց իր հոգում,—
երգում էր քամին:

ԵՐԲ ՋԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ջահելությունը մնում է գարնան ընձյուղների կողքին,
տաք առավոտի մեջ, աղջիկը պարտեզում
նորահայտ ծաղիկներ է տեսնում:

Կեսօրին լեռների վրայով
ծիծեռնակները սուրում են հեռու
Տունդարձի ճամփաներով
վերադառնում են նրանց երգեցիկ կանչերը:

Իրիկունը, որ փափուկ թևեր ունի
և հոգնած մեջք,
ցողում է ծաղիկները անդորրի հույզերով:
Աղմուկը մեկընդմիջաւ մնում է եղեգնուտաներին,
ճիշը լքում է հոգին:

Ճանապարհն անվախճան է: Սկիզբը մենք ենք:
Մեր կանչերը արձագանքվում են հեռու՝
անանցանելի ճահիճների վրայով
և իրիկնային խաղաղ մարգերով—
և մենք կարծում ենք պետք է հորինել
նոր ճանապարհներ՝ մեր ցնծությանը հասնելու համար:
Օ՛, պետք չէ հիշել, հավատա, պետք է մոռանալ նույնիսկ,
որ այս ճանապարհը նաև վերադարձի համար է:

Քո դիրկը սուք է
և ես օրհնում եմ գարնան տնձրեր:
Քո խոսքերը անասելիորեն մեղմ են
ու մարող կրակի պես իմաստուն,
և ես օրհնում եմ թիթեռնիկների
հրաշալի թևահարումը:
Թող ես անցնեմ քո ճանապարհով
իմ բարի վերադարձի համար:

ԴՈՒ ԵՎ ԵՍ

Ինձանից հետո ժայռերն են,
հետո՝ կաղնու սաղարթը,
հետո՝ երկինքն է,
հետո քո աչքերն են ու իմ համբույրները,
հետո վերևից շարժվում են ստվերները
ճառագայթների պես հմայիչ,
ներքևում մարմինս մնում է գիշերի մեջ:



Արցունքը բարձրանում է իրերից,
բարձրանում մեր ապրած կյանքն ի վեր...
Մենք շենք արտասվում—
մենք վերադարձնում ենք իրերի
կորցրած քնքշությունը:

Դեղձենու կարմիր ծաղիկ,
ծածկիր քո բույրով
րնկուղենու խունացած տեսքը,
որ տխուր նայում է քո ետևից:
Դեղձենու կարմրավուն ծաղիկ,
թող թերթերիդ նստեն ամենատկար մեղուները
և տուր նրանց հեղորեն քո հարսնվորիկ տեսքը:
Դեղձենու դեղին ծաղիկ,
տես, փակվում են արեգակի թերթերը,
օրն ավարտված է:

ԹԵՄԱ

Դուան առջև ես եմ,
ձևոքս մեկնած բռնակիրն
Դուան ետևում մայրս է,
որ այսօր շատ է հոգնել ու ննջում է աթոռին:
Շուրջը գյուղն է,
մայրիկի երազը,
հայրիկը, որ դեռ չի գալիս
և այգիներում ծաղկող դեղձենիները:
Պատուհանների լույսերը մթան մեջ լողում են
և մարդկային աչքերի նման
նայում են տարբեր փայլերով:

ԻՐԻԿՈՒՆ ԲԱՐԻ, ԴԱՐՁԻՐ ԱՌԱՎՈՏ

Գետափի գուլնղգուլն ավազների վրա
մայր ձկները կպառկեն տաք կողերով,
(Սյդ օրը արեգակը կպատկանի նրանց):
Ձկները գարնան վառ սավաններ կուզեն,
որ ծածկեն այդ օրը և խառնվեն իրար
վայրկյաններն ու իրենց նորածինները:

Մարգարիտները ջրից կլողան դուրս,
գետաքարերի պես կընկնեն կանաչին:
Ջրերի թագուհին կուզենա մեռնել լեռան վրա,
լեռների արքան կխեղդվի ջրում:
Քամին շուռ կտա գրքի հաջորդ էջը
և կփոփոխվի տոնական օրերի կարգը:

Իրիկո՛ւն բարի, դարձիր առավոտ,
հենց հիմա, երբ մենք քնած ենք խոր
փաթաթված մեր բուրավետ երազներով,
դարձիր առավոտ գետափի գուլնղգուլն ավազների մեջ:

ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1

Պատուհանները փակ են: Ներսում մութ է:
Սիրտը դրված է անհանգիստ տենչերի մեջ:
Ժամանակը և քամին խառնված միմյանց
թռչում են մերկ դաշտերի վրայով:

2

Ինչ-որ մեկն սնցավ ծաղկանոցի կողքով
կամաց ցնցելով անհանգիստ տենչերի օգը:
Լիրդյո՞ք սկսվեց առաջին շարժումը երկրի վրա,
արդյո՞ք արթնանալու է առաջին կարոտը
հիշողությանից դեպի օրը:
Կորստյան երգերի մեջ ահա բուրձրանում է արեգակը,
թափահարվում են սիրելի ձևերը:
Կարոտը շունի անցյալ և ներկա
Կարոտն ունի իղձեր՝ երգեցիկ
և սլառահարներ՝ ճարճատուն ու ըմբոստ:
Շուտով ինչ-որ բան կանցնի այս օրվա

սահմաններից դուրս,

հետո կանցնի մյուսը: Պատուհանները կմնան փակ:
Ներսում՝ խավար:
Սմեռավերջում անհանգիստ տենչերից
կհեռանա սիրտը գեպի երգեցիկ իղձերի երկիրը:

ՄԵՐ ՄԻՋԵՎ

Մեր միջև ավարտվեց ժամանակը:
Մեր միջև կանգնեցին մառախուղի շքնաղ ծաղիկներ
ճակատագրի պես մտերիմ և անըմբռնելի:
— Ինչպե՞ս մոտենալ միմյանց խոհերին, —
մտածեցինք մենք:
Մենք արթնացել էինք մեր թաքուն խոհերից
և անժանոթ էինք մեղ:
Մեր միջև լռել էին հորինյալ հմայիչ երկրի կանչերը:
— Ինչպե՞ս մոտենալ միմյանց խոհերին, —
մտածեցինք մենք: Մեր միջև լռել էին կանչերը,
մեր միջև կանգնել էինք մենք,
հույզերը՝ ավարտուն,
տենչերը՝ ավարտուն,
մառախուղի աննման ծաղիկների միջով
ձղվում էր երկու ճանապարհ:



Գիշերվա մեջ մնացին վարդեր—
գույները տարանք մեր աչքերում:
(Երբ որ առավոտը բացվի
աշունը կհոսի նրանց երակներով):

Մենք հեռու կլինենք մեր հարազատ ափերից:
Մեր փորձությունների ու ակնկալիքների ոսկե ժամանակը
կմնա ետ իբրև կարոտ:
Եվ մեր անդառնալի սիրելի վայրերում
կմնան փոքրիկ արձանիկներ
գեղեցիկ, հաղվադյուտ, անկրկնելի:



Մութը ծնվում է ինչպես լույսը
սպասելիքների և հույզերի փխրուն մայթերի վրա:
Մութը բերում է ետկանչեր
և բանաստեղծությունը հնչում է տխուր:
Մութը գալիս է լույսի ճանապարհներով,
երբ մենք լուսով ենք
և մեր երգը շարունակում են ծղրիղները:
Մեր շուրջբոլորի ծաղիկները բարձրանում են
մեր հայացքներն ի վեր,
մեր խոհերն ի վեր,
գույները բույր են դառնում,
բույրերը՝ անմահ հիշողություն:—

Քո պատկերը պսակում եմ ես
իմ ապրած նուրբ երաժշտությամբ,
լույսի սիրո մեջ,

ծառերի հմայքի մեջ,
հոգիների կրակի մեջ
կա քո գաղտնիքը:
Ամեն անգամ կեսգիշերին, երբ մութը ծածկում է
աշխարհի ճանապարհները,
ծառերի հմայքի, լույսի սիրո, հոգիների կրակի միջով
ես վերադառնում եմ իմ կենսագրության քաղաքները:
Ես կորցրել եմ քեզ իմ հրաշքների բոցերի մեջ
ու մինչև ծնվի հաջորդ օրվա լույսը, ես որոնում եմ քեզ
իմ ապրած ամենանուրբ կրաժշտության մեջ:

ԽՈՂ ԽՆՁՈՐՈՎ

Մեկնեցին: Ու վերջին ուղին
անցնում էր աշնան սրտի միջով:
Մեկնեցին հին անունները՝ լքելով
մեր ժամանակը:
Ըբր մութ անկյունում նստած եկ մտածենք,
որ բաժանումն այդ սիրո այլ ձև է
ու դեռ տենչանք կարոտով
մեր կյանքի քաղցրություններին,
որ պիտի հասնեն կենսական ճյուղերի վրաս:

Վերջին ուղին դեռ կայծկլտում է կիսախավարում—
օ, ինչ-որ մեկը ծնվում է կիսախավարի մեջ

ինքը տակավին անըմբռնելի
և թոթափելով ցրտի խանձարուրը մարմնից
մոտենում է մեր հոգուն:

Վերադարձ: Այդ ավարտուն տառապանքն է
Կրակի և Սքանչելիքի:

(մեր լքյալ ու ամայի ժամանակի մեջ)

ձմռան սառցե ձեռքերում

ինչ հմայիչ է խնձորը՝ դեղին և կարմիր շերտիկներով:

Մենք ապրում ենք նաև անցյալի մեջ, ուր հավիտյան

լողում են

հրաշալի ձևերը տաք ու ինքնաբուխ:



Ու շատա քեզ մտածեցնող ուղին—

և ոչ մի օր շուներ իր թևերին

այդ ուղին պահած:

Մտածեցի, որ ամենաճիշտը աշխարհում

(բոլորից ամենաճիշտը)

անցնում են գետերը—

որտեղով պատահի,

ինչպես պատահի:

Եվ քեզ պետք էր փնտրել այնտեղ,

ուր ճանապարհ չկա ու չի լինելու:
Քեզ փնտրեցի ջրերի ակունքն ի վեր,
դեպի սկիզբն ու կորուստը:
Քո անունը ճանապարհիս
թողնում էր ճերմակ խեցիներ,
որոնց մեջ ես ննջում էի հոգևած
հեռավոր ծովերի կանչերին ունկնդիր:

ՈՐԴԻ ԴԵՂՁԵՆՈՒ

Ես որդին եմ այս ծաղկած դեղձենու:
Մաշկիս տակ լողում են նրա շոր մատները
և պտուղները հրաշալի:
Այն, ինչ աշխարհում կոչել եմ գեղեցիկ,
ավելին չէ, քան նրա ծաղիկները—
և այն, ինչ կոչել եմ տխուր,
ավելին չէ, քան նրա
աշնան տեսքը՝ խոնավ ու կողոպտված:
Ես որդին եմ այս ծաղկած դեղձենու:
Հիմա և ընդմիշտ
ասլրում եմ նրա ստվերի ու լույսի մեջ
ու մի օր եթե ընկնեմ նրա ճյուղերից,
ուրեմն ելել եմ մաշկիցս դուրս,
լքել եմ սիրտս:
Ես որդին եմ և հայրը այս ծաղկած դեղձենու:

Յ Ա Ն Կ

Սոու, տար ինձ քո հունով	3
Մեզանից ինչ-որ մեկը	4
Լրեկո: Ես զգում եմ ծաղիկներից բույրը	5
Լեզենդ	6
Երջանկության համար	7
Սհունը կգա ծաղկած խոտերի միջից	7
Լուս ցանկացա	8
Սրկինքը մեղեդիներ հղեց	9
Խոսակցություն	9
Իալլադ	10
Ես դիտեմ	11
Սպասիր լեռան կատարին	13
Հավիտյան բուրում են վարդերը	13
Հին երգերից մնում են ինչ-որ հուշ-եյիկներ	14
Ինձ՝ այնպիսի ծաղկաման	15
Կուցկու բոցը թրթսում է	15
Յուրտ դիշեր	16
Վերջը	16
Մեր ապրած վայրկյանների մեջ թող մնան անմատույց խոտոշներ	17
Արևը մնաց ծառերի մեջ	18
Ցուրաքանչյուր վայրկյանը	19
Նրանք միացնում են տառապանքն ու ցնծությունը	20
Օր սովորական	21
Անձրևոտ պատկերներից այն կողմ	22

Ռարի երեկո, երգ	23
կրթեմն կշնչեն քո հին կտավները ջերմորեն ու սիրով	24
ես կլինեմ քեզանից հեռու	24
Ջյան փաթիլների մեջ շարունակվում է ամառը	25
Թույն և մեղր	26
Եկ, իմ ծաղկած շիվ	27
Սրեկոն մի հոգնած ճամփորդ	28
Պապս	28
Ուշ աշուն	29
Հովվին տարավ լուսաբացը	30
Երբ ջահելությունը մնում է	30
Ճանապարհն անվախճան է: Սկիզբը մենք ենք	31
Քո գիրկը տաք է	31
Դու և ես	32
Արցունքը բարձրանում է իրերից	32
Դեղձենու կարմիր ծաղիկ	33
Թ՛՛՛մ	33
Իրիկուն բարի, դարձիր առավոտ	34
Տրամադրություն	35
Մեր միջև	36
Գիշերվա մեջ մնացին վարդեր	36
Մութը ծնվում է ինչպես լույսը	37
Խոհ խնձորով	38
Ես չգտա քեզ մոտեցնող ուղին	39
Որդի դեղձենու	40

Ղուկաս Տիգրանի Սիրունյան
ԻՐԻՆՈՒՆ ԲԱՐԻ, ԴԱՐՁԻՐ ԱՌԱՎՈՏ

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Ա. Ե. Եղոյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Խաչատրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Ս. Կառապետյան

Гукас Тигранович Сируниа
ВЕЧЕР ДОБРЫЙ СТАНЬ УТРОМ
(стихи)

(на армянском языке)

Издательство «Советакан грох», 1977 г.

Հանձնված է շարվածքի 28/VI 1976 թ , ստորագրված է տպագրության
27/V 77 թ , թուղթ՝ № 2, 70×108 1/32, տպագր. 1,87 մամ = 2,62 պայմ
մամ , հրատ. 1,2 մամ : Պատվեր՝ 863: ՎՖ՝ 05678: Տպաքանակ՝ 5000
Գինը 14 կ.: «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—Թ,
Տերյան 91:

ՀՍՍՀ Հրատպետկոմի և Աշտարակի շրջգործկոմի տպարան, Արսվյան 29
Типография Аштаракского райисполкома и Госкомиздата Арм ССР,
ул. Абовяна 29.

